Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2024թ մարտի 4-8-ը Շրի Լանկայի Դեմոկրատական Սոցիալիստական Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝** Մարտիրոս Նալբանդյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.** Շրի Լանկայի Դեմոկրատական Սոցիալիստական Հանրապետություն, Կոլոմբո, 2024թ. մարտի 4-ից 8-ը

4. **Հրավիրող կողմը.** Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (ՄԱԶԾ)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).** Մասնակցություն 16 երկրների ներկայացուցիչների միջև փորձի փոխանակման աշխատաժողովին

Ճապոնիայի կառավարության աջակցությամբ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը 2021թ.-ից ի վեր օգնում է զարգացող երկրներին իրենց ազգային կլիմայական խոստումները (նաև հայտնի են որպես ազգային որոշված ներդրումներ կամ NDCs) վերածել շոշափելի գործողությունների: Ֆինանսավորումն իրականացվում է ՄԱԶԾ-ի առաջատար նախաձեռնության՝ Կլիմայի խոստման միջոցով:

ՄԱԶԾ-ի առաջատար «Կլիմայական խոստում» նախաձեռնությունը վերջին վերանայման շրջանի ընթացքում աջակցել է բոլոր զարգացող երկրների դիմումների 85 տոկոսին ազգային որոշված ներդրումների (NDC) ներքո, որոնց 91 տոկոսը բարձրացրել է մեղմացման հավակնությունները, իսկ 93 տոկոսը բարձրացրել է հարմարվողականության հավակնությունները:

6. **Քննարկված թեմաները.** Աշխատաժողովում քննարկվել են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմացնող ծրագրերի վերաբերյալ մասնակից երկրների լավագույն փորձը, ինչպես նաև 16 երկրների պետական և միջազգային գործընկեր կառույցների ներկայացուցիչների ջանքերն ու գիտելիքները՝ ուղղված Փարիզի համաձայնագրի ներքո Ազգային մակարդակներում սահմանված գործողությունների արդյունավետ իրականացմանը: Աշխատաժողովը կարևոր հարթակ էր՝ վերլուծելու կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության և դրա ազդեցությունը

մեղմացնող գործողությունների հիմնական ոլորտները, ներառյալ՝ կայուն գյուղատնտեսական պրակտիկաները, ջրօգտագործման գործելակերպերը, մաքուր էներգիան և տրանսպորտը և այլն: Այս համատեքստում հարկ է նշել, որ ՄԱԶԾ-ն 2021թ. ի վեր զարգացող երկրներին աջակցում է իրենց ազգային կլիմայական պարտավորությունները կյանքի կոչելու գործում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. Փորձի փոխանակման աշխատաժողովի շրջանակներում կազմակերպված տարբեր ձևաչափով քննարկումների ընթացքում Մ. Նալբանդյանի կողմից ներկայացվել է մասնավորապես Ճապոնիայի կառավարության կողմից ֆինանսավորվող և ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող <<Անցում ցածրածխածնային ոռոգման տեխնոլոգիաներին Լոռու և Շիրակի մարզերում՝ բարձրացված արտադրողականության, պարենային անվտանգության և բարելավված կենսապահովման համար>> ծրագրի արդյունքներն ու գրանցած առաջընթացը թիրախային մարզերի ոռոգման արդյունավետության բարձրացման տեսանյունից, նշելով նաև ջրային ոլորտի նմանատիպ ծրագրերի ուղղակի և անուղղակի ներդրումն ու մասնաբաժինը Փարիզի համաձայնագրի ներքո Ազգային մակարդակներում սահմանված գործողությունների արդյունավետ իրականացման գործընթացում: Քննարկվել են նաև նմանատիպ ծրագրերի իրականացման այլ երկրների փորձը, ինչպես նաև ծրագրային խնդիրներին և գլոբալ մարտահարվերներին վերաբերող հարցեր:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ձևաչափը չի ենթադրել որոշումների ընդունում: Հանդիպման ժամանակ փաստաթղթեր չեն ստորագրվել:

Մ. Նալբանդյանը երկկողմ ձևաչափով քննարկումներ է ունեցել ՄԱԶԾ գլխամասային գրասենյակի և Հնդկաստանի ներկայացուցիչների հետ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ քննարկումների ձևաչափով նախանշել ջրային ոլորտում հետագա համագործակցության զարգացման հնարավորություններն ու շրջանակները: Այս համատեքստում Մ. Նալբանդյանը հնդկական կողմի գործընկերների հետ քննարկել է Հայաստանի և Հնդկաստանի միջկառավարական հանձնաժողովի՝ 2022թ-ի հուլիսի 4-ին Երևանում կայացած 8-րդ նիստի արձանագրությամբ ձեռք բերված պայմանավորվածությունների ուղղությամբ հնարավոր համագործակցության շրջանակները: Մ. Նալբանդյանը ՄԱԶԾ գլխամասային գրասենյակի ներկայացուցչի հետ աձանձնազրույցի ընթացքում խնդրել է գործընկերուհուն Ճապոնիայի կառավարության կողմից ֆինանսավորվելիք հետագա ծրագրերում կարևորել ջրային համակարգերի ոլորտային դերակատարումը և խոցելիությունը կլիմայական

փոփոխությունների համատեքստում և վստահեցրել, որ ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեն պատրաստակամ է շարունակել համագործակցությունը և ստանձնել առաջատար գործընկերոջ դերակատարում նմանատիպ նախաձեռնություններում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Փորձի փոխանակման աշխատաժողովի արդյունքներով առաջարկվում է.

- Միջազգային հարթակներում հետևողականորեն առաջ տանել և ջրային ոլորտը որպես թիրախ կարևորել կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության, ինչպես նաև ազդեցությունները մեղմացնող նախաձեռնություններում՝ երկկողմ, բազմակողմ ձևաչափով քնարկումներում, հանդիպումներում և տեղական ու արտերկրյա աշխատաժողովներում: Առաջարկի իրագործման ձևերն են երկրի կողմից իրականացված և ընթացիկ ծրագրերի ներկայացումը, կարողությունների օբյեկտիվ գնահատումն ու ներկայացումը, կլիմայի փոփոխության հետ ոլորտի ուղղակի կապի և առնչության մեխանիզմների ներկայացումը, հիմնավոր գնահատված կարիքների ներկայացումը, ինչպես նաև հնարավոր համագործակցությունների իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների նախանշումը: Սույն առաջարկության պատասխանատվությունը հարկավոր է վերապահել ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Recoverable Signature

X

ՄԱՐՏԻՐՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

14.03.2024թ. Signed by: NALBANDYAN MARTIROS 1801790221